

«ԱՍՔՄԵՂ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

ԳՈՐԻՍԻ ՊՐ. Խ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ՆՈՐ ՄԱՍՆԱՇՇԵԼՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԱՍՔՄԵՂ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ տնօրեն՝

Հ. Կարապետյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....4

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ5

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ.....7

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....10

3.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 12

 3.1.1 Ջրամափակարարում և ջրահեռացում..... 15

 3.1.2 Ջեռուցում և օդափոխություն 16

3.2 Տարածքի ոռոգում 17

 Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/..... 17

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ).....18

4.1 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը 18

4.2. Շինարարական աշխատանքների բնութագրերը..... 19

4.3. Քանդման աշխատանքներ կատարման հերթականություն 19

4.4. Աշխատանքների անվտանգության իրականացման սարքեր և կանոններ 22

4.5. Ժամանակավոր շինարարական տնտեսություն 26

 Հ/հ..... 26

4.6. Շինարարության կազմակերպում..... 27

 4.7. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 29

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝.....30

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ30

5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 30

5.1 Շրջանի գեոմորֆոլոգիան 31

5.3. Շրջանի կլիմայական պայմանները..... 31

5.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները 32

5.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը 34

5.6. Մթնոլորտային օդի որակի բնութագիր 35

5.7. Ջրային ռեսուրսներ 36

5.8. Հողային ռեսուրսներ 36

5.9. Կենսաբազմազանություն 37

 5.9.1. Բուսական աշխարհ..... 37

 5.9.2. Կենդանական աշխարհ 37

5.9.4. Գործիսի տարածաշրջանի բնության հուշարձանների ցանկ 42

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ43

6.1 Ռիսկերի գնահատում 43

6.2 Օղի աղտոտում 43

6.3. Զրոգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 45

6.4 Բնապահպանական միջոցառումների նկարագիրը47

 6.4.1. Մթնոլորտային օդ 47

 6.4.2. Զրային ռեսուրսներ 48

 6.4.3. Հողային ռեսուրսներ 48

 6.4.4. Աղմուկ 49

 6.4.5. Կենսաբազմազանություն 50

 6.4.7. Փոխհատուցում 54

7. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ55

 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 56

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ61

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ64

ԸՆԴՀԱՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում
Ծրագրի նպատակը	ՀՀ Քոլեջների սեյսմիկ անվտանգության բարելավում
Ծրագրի պատվիրատու	Քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«ԱՍՔՄԵԴ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 25, բն. 2
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ.՝ (+374 10) 54 17 07 (քաղ.) (+374 93) 69 78 04 (բջջ.) E-mail: askmeddesign@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Սյունիքի մարզ ք. Գորիս, Առաքելյան փողոց 32 հասցե
Կառուցապատվող տարածքի մակերեսը	6748.0 ք.մ մակերեսով հողամասում ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3311.1 ք.մ /ներառյալ՝ վերակառուցվող շինությունների մակերեսը/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«ԱՍՔՄԵՂ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերությունը մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Նախագծի մշակումը կատարվել է «ԱՍՔՄԵՂ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ կողմից՝ քաղաքաշինության կոմիտեյի կողմից քոլեջների համար սահմանված տեխնիկական բնութագրի և նախագծային առաջադրանքին համապատասխան: Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել քաղաքաշինության կոմիտեյի հետ կնքված պայմանագիրը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի սեյսմիկ անվտանգությունը և կմեծանա սեյսմիկ անվտանգությունը:

Քոլեջի սեյսմիկ կայունության բարելավման և սույն գործունեության իրականացման համար մշակվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության և նախնական գնահատման սույն փաստաթուղթը: Փաստաթուղթը մշակվել է որպես սույն գործունեության բնապահպանական գնահատման ուղեցույց, որի իրականացնող մարմինը հանդիսանում է քաղաքաշինության կոմիտեն: Այս փաստաթուղթը ներառում է Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (Քոլեջի կառուցապատման մակերեսը ընդհանուր կազմում է 3311.1 ք.մ):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

օդային ավազանի աղտոտում շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Գորիս համայնք/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

շինարարական մեքենաների և տեխնիկայի պատճառով տեղի երթևեկության խափանում, հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,

հողերի աղտոտում շինարարության և շահագործման ընթացքում առաջացող շինարարական և կենցաղային աղբով,

աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

Քոլեջի աշխատանքային նախագիծը,

Կառուցապատվող տարածքի վերաբերյալ հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,

տարածաշրջանի վերաբերյալ ելակետային տվյալների վերլուծությունները, քարտեզները, Քոլեջների սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

աշխատանքային նախագծի հիման վրա մշակվել է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ,

շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ,

բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև:

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող

գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարություն 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում և ՀՀ կառավարության 27 սեպտեմբերի 2018 թվականի N 1029-Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը:

ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից

բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում սպուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

Բնապահպանական որակի սպանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, **ՀՀ կառավարության** 2009 թվականի հուլիսի 23-ի «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» N30 արձանագրային որոշումը,

Ուղեցույցներ և սպանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2019), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող կազմակերպություն է հանդիսանում «ԱՍՔՄԵԴ ԴԻԶԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընկերության գործունեության հասցեն է՝ ք. Երևան, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 25, բն. 2: Ընկերությունը մասնագիտացված է նախագծային աշխատանքներում և կապիտալ շինարարության ասպարեզում:

Նախատեսվող գործունեությունն է՝ Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում: Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը գտնվում է Գորիս քաղաքի, Առաքելյան փողոց թիվ 32 հասցեում, գոյություն ունեցող քոլեջի տարածքում, որը սեփականության իրավունքով պատկանում է «Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին:

Քոլեջի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման նախագծային աշխատանքների պատվիրատու է հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն: Նախագծման աշխատանքներն իրականացվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի և պայմանագրի հիման վրա:

Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող քոլեջի տարածքում, որտեղ հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատում: Գորիս քաղաքի Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման/քանդման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներն իրականացվելու են անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված 0.6748 հա մակերեսով հողամասում /վկ թիվ 14052014-09-0023 տրվ. 2024 թվականի մայիսի 14-ին, կադաստրային ծածկագիր 0 9-0 0 3-0 220 -0052/:

Տարածքի իրավիճակային սխեման ներկայացված է սպորու



3.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Առաքելյան փողոց 32 հասցեում, Մովսես Խորենացի փողոցի հարևանությամբ, ամբողջությամբ կառուցապատված տարածքում: Գոյություն ունեցող քոլեջի շենքն իրենից ներկայացնում է երկհարկանի մասնաշենք, որը զբաղեցնում է 456.60 քմ մակերես: Նախագիծը ներառում է գոյություն ունեցող շենքի ուժեղացում/վերակառուցում, տարածքում գոյություն ունեցող մասնաշենքի քանդում և քոլեջի համար նոր մասնաշենքի կառուցում: Վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներն իրականացվելու են ամբողջովին կառուցապատված տարածքներում, որոնք սեփականության իրավունքով պատկանում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին: Կառուցապատվող տարածքի մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1459,3-1466,8 մետրի սահմաններում: Գոյություն ունեցող մասնաշենքի հարևանությամբ առկա կանաչապատ մակերեսները պահպանվելու են: Տարածքում առկա ծառերը չեն ենթարկվի շինարարական աշխատանքների ազդեցության, կամ հատման: Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսները կազմում են 2500 քմ:

Նախագծման աշխատանքներն իրականացվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի և պայմանագրի հիման վրա:

Վերակառուցվող մասնաշենքի առաջին հարկում տեղադրված են՝ նախասրահ, բուֆետը, ուսուցչանոցը և սանհանգույցները, իսկ երկրորդ հարկում՝ վարչական նպատակով ծառայող սենյակներ, ուսուցչանոց, տնօրենի աշխատասենյակը ընդունարանով և քոլեջի 6 դասարանները: Համաձայն պատվիրատուի առաջադրանքի նոր մասնաշենք նախագծված է չորս հարկանի, որն իրենից ներկայացնում է ուղղանկյուն շինություն և զբաղեցնում է 1257.0 քմ մակերես: Մասնաշենքում նախատեսված են հետևյալ սենքերը՝ նախասրահ, պահեստ, սպորտ դահլիճ, տղաների և աղջիկների համար հանդերձարաններ՝ իրենց սանհանգույցներով և ցնցուղարանով, հանդիսությունների դահլիճ, գույքի պահեստ, փորձարարական, արտադրական և լաբորտոր սենյակներ և դասարաններ: Քոլեջի տարածքում առկա՝ 219.60 քմ մակերես զբաղեցնող ջերմոցը ծառայելու է քոլեջի ուսումնական նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար: Նախագծով նախատեսված է նաև կառուցել նորակառույց սպորտային մասնաշենք, որը կզբաղեցնի 412.90 քմ մակերես: Մասնաշենքերի միջանկյալ հատվածում նախատեսված է կառուցել սպորտ հրապարակ, որը կըբաղեցնի 680.0 քմ մակերես: Սպորտ հրապարակը եզրավորվելու է նոր կանաչապատ մակերեսներով /մոտ 1000 քմ մակերես/ հասցներով քոլեջի ողջ տարածքում կանաչապատման ընդհանուր մակերեսը 3460 քմ /առկան և նախատեսվողը միասին/:

Տարածքում առկա է քանդման ենթակա մասնաշենք /որի մակերեսը 720 քմ է/: Քանդման աշխատանքներ ժամանակ անհրաժեշտ է տեսակավորվելու են բոլոր նյութերը: Քանդման արդյունքում առաջացող ոչ պիտանի շինարարական թափոնները և աղբը տեղափոխվելու են Գորիսի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, իսկ

պիտանի նյութերը կրկնակի օգտագործվելու են շինարարության համար: Արտաքին քանդման աշխատանքների ժամանակ փոշու նվազեցման համար նախատեսված է քանդվող տարածքը հաճախակի ջրցանել:

Նախագծվող շենքերում բաժանումները կիրականացվեն պեմզաբլոկով, կտեղադրվեն նոր մետաղեպլաստե պատուհաններ, այլումինե և ջերմակամուրջով արտաքին դռներ: Ըստ ֆունկցիոնալ նշանակության՝ կտեղադրվեն նաև ներքին մետաղեպլաստե, այլումինե և հատուկ ճառագայթապաշտպան դռներ: Ըստ գործող շինարարական նորմերի՝ նախատեսվում է նաև նոր էլեկտրասնուցման և լուսավորության ցանցեր, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր, ինչպես նաև նոր օդափոխության և ջեռուցման համակարգեր:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող բազալտե և բետոնե եզրաքարերի փոխարինում նորերով: Տարածքի երթևեկելի մասերում և մայթերում նախատեսվում է նոր ասֆալտի իրականացում՝ քանդելով հին ծածկույթը:

Վերակառուցման աշխատանքները ներառում են նաև շենքի սեյսմոկայունության բարձրացման, ջերմային կորուստների նվազեցման և շենքի էներգոխնայողության բարձրացման միջոցառումները:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձված մի շարք կարևոր հարցերին: Քոլեջն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին: Սակավաշարժ խմբերի համար հին մասնաշենքում նախատեսված է եղել վերելակ, ինչպես նաև համապատասխան վայրերում թեքհարթակներ:

Հակահրդեհային պայմանները ապահովելու համար գոյություն ունեցող մասնաշենքում նախատեսված են երկու լրացուցիչ աստիճանավանդակներ: Նկուղային հարկից նախատեսված են դեպի բակ երկու ելք: Տանիքի ջրահեռացումը կատարվում է կազմակերպված:

Նոր կառուցվող մասնաշենքում նախատեսվում է ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր: Զրամատակարարումը, կոյուղին և տաք ջրամատակարարումն իրականացվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներով:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը: Տարածքում առկա 285.0 քմ մակերեսով շինությունը պետք է ծառայի որպես կաթսայատուն: Կաթսայատանը նախատեսված է տեղադրել երկու հատ 350 կվտ դրվածքային հզորությամբ գազաջեռուցիչ կաթսաներ:

Էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը և գազամատակարարումն իրականացվելու են գործող ենթակառուցների միջոցով:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի Քոլեջի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև ներքին հեռախոսակապի համակարգ:

Նախագծով աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել, իրականացնել ցանկապատման

աշխատանքներ: Քոլեջի ամբողջ հողամասում կանաչապատման մակերեսը ընդհանուր կկազմի 3459.60 քմ /գոյություն ունեցող և նախատեսվող/: Այն կներառի սիզամարգ, ծառերի և ծաղիկների տեսքով կանաչապատում: Տարածքում նախատեսվող լրացուցիչ կանաչապատման համար կբերվի նոր բուսահող: Նշված աշխատանքներն իրականացվելու են Գորիսի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Ծառերի կաչողականությունն ապահովվելու է ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է Քոլեջի տնօրինությունը:

Ոռոգումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից՝ բարելավվելով այն: Նոր տարածքների ոռոգումը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ 5.5 խմ/օր ոռոգման համակարգի ջրի ծախսով:

Բարեկարգման և կանաչապատման միջոցառումները կիրականացվեն բարեկարգման և կանաչապատման պլաններին համապատասխան, որոնք ներկայացվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- 1. Ընդհանուր հողամասի մակերես - 6770.0 քմ
 - 2. Կառուցապատման մակերեսը
 - I - Գոյություն ունեցող երկհարկանի մասնաշենք – 456.60 քմ
 - II – Նորակառույց ուսումնական մասնաշենք – 1257.0 քմ
 - III – Նորակառույց սպորտային մասնաշենք – 412.90 քմ
 - IV – Տնտեսական մասնաշենք - 285.0 քմ
 - V – Ջերմոց - 219.60 քմ
 - VI Սպորտ հրապարակ – 680.0 քմ
 - 3. Շենքի ընդհանուր մակերես /գոյություն ունեցող և նորակառույց/ - 7439.85 քմ
 - 1. Շենքի շինարարական ծավալը
 - ա/ գոյություն ունեցող – 3150.50 խմ
 - բ/ նորակառույց - 23061. 20 խմ
 - գ/ տնտեսական – 1026.0 խմ,
- Բարեկարգում, կանաչապատում – 3459.60 քմ:

Քոլեջի տարածքի գլխավոր հատակագիծը:



ԱՆՎԱՆՑԱՆԿ

- I- գոթոթՅՈՒՆ ՈՒԵՑՈՂ ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ
- II- ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՈՒՄՈՒՄԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ
- III - ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ
- IV - ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ
- V - ՋԵՐՄՈՑ
- VI - ՄՊՈՐՏ ՀՐԱՊԱՐԱԿ

3.1.1 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Գորիսի պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի <<Ջրամատակարարում և կոյուղի>> բաժինն իր մեջ ներառում է՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Տարածքի ոռոգում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Նոր կառուցվող մասնաշենքի հաար նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացում՝ գոյություն ունեցող ցանցերից, հակահրդեհային սնուցող ցանց, ոռոգման ցանց, էլեկտրամատակարարում: Անհրաժեշտ պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ցանցերից՝ համապատասխան լիազոր մարմինների կողմից տրվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Ջրամատակարարումն իրականացվելու է շենքի գործող խողովակով՝ Գորիսի ջրամատակարարման ցանցից: Կենցաղային ջրի հաշվարկային ծախսը կազմում է 1.15լ/վրկ:

Շենքի դիմաց ջրագծի վրա նախատեսվում է դիտահոր, որի մեջ նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար ջրապահանջը՝ կախված շենքի հարկայնությունից և ծավալից կազմում է 1 շիթ 2.5լ/վրկ: Արտաքին հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրապահանջը՝ կախված շենքի հարկայնությունից և ծավալից կազմում է 20 և/վրկ, հրդեհաշիջման տևողությունը՝ 3 ժամ:

Ջրամատակարարման արտաքին ցանցը նախատեսված է մոնտաժել պողպատյա եռակցված խողովակներով: Ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե 50-15մմ տրամագծերով խողովակներով: Շենքի կոյուղաջրերը հեռացվում են միասնական ինքնահոս համակարգով կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ձևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիվինիլքլորիդե 50-100մմ խողովակներով: Կոյուղու ելքագծերի հորիզոնական հատվածների համապատասխան հեռավորությունների վրա նախատեսվում են մաքրիչներ: Շենքից կոյուղաջրերը լցվում են կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է գործող դիտահորին:

Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր:

3.1.2 Ջեռուցում և օդափոխություն

Քուլեջի բոլոր շինությունների ջեռուցումն իրականացվելու է կաթսայատան միջոցով: Ջերմության հաշվարկային ծախսերը կազմում են $Q_{\Sigma}=420$ կՎտ, իսկ կաթսայատան համար գազի ծախսը՝ 70 մ³/օր: Քուլեջի վերանախագծման արդյունքում կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 350կՎտ (ջերմության ընդհանուր հաշվարկային ծախսը՝ $Q=360500$ կկալ/ժամ) ջերմային հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով: Շենքի արտաքին պատերի և վերևի ծածկի կոնստրուկցիաների ջերմամեկուսացման շնորհիվ ջեռուցման ծախսը նախատեսվում է նվազեցնել շուրջ 40 % - ով:

Որպես վառելիք կկիրառվի ցածր ճնշման բնական գազը: Կաթսայատան գազասպառման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով կտեղադրվի այրվող գազերի ազդանշանային սարք:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի ծխնելույզի միջոցով, որի պահանջվող բարձրությունը որոշվել է ըստ СНиП II-36-76 պահանջների: Վերջինիս համաձայն ծխնելույզի պահանջվող բարձրությունը կազմում է 7մ: Նախագծով նախատեսվել է 9 մ բարձրության և 400 մմ տրամագծով ծխնելույզ:

Կաթսայատանը տեղադրված են ժամանակակից կաթսայական սարքավորումներ, որոնք ապահովում են գազի այրման արգասիքների նվազագույն քանակ:

Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի՝ ներածող-արտածող, ընդհանուր փոխանակային, բնական և արհեստական օդափոխության համակարգերով: Դասասենյակներում օդի ներածումը բնական է, իրականացվում է լուսամուտներից՝ դասամիջոցներին: Արտածումը ևս բնական է, իրականացվում է սենյակի միապատիկ ծավալի չափով՝ ուղղաձիգ օդատարների միջոցով:

Առանձին ներածման-արտածման համակարգեր են նախատեսված խոհանոցի, ճաշարահի, սպորտային մասնաշենքի և ջերմոցի համար:

3.2 Տարածքի ոռոգում

Համաձայն նախագծի նախատեսվում է բարելավել ոռոգման համակարգը՝ մոնտաժել այն վերգետնյա, պողպատե խողովակներով: Կանաչապատ տարածքների ոռոգումը և ասֆալտապատ մակերերևույթների լվացումը նախատեսվում է իրականացնել ոռոգման ցանցի միջոցով: Ոռոգման համար անհրաժեշտ ջուրը վերցվում է տարածքով անցնող գործող քաղաքային ոռոգման ցանցից: Ոռոգման ցանցի վրա նախատեսվում են փականներ՝ ոռոգման գլխիկներով: Ոռոգման շրջանի ավարտին անհրաժեշտ դատարկել համակարգը և փակել սնման փականը:

Ոռոգման և ջրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 3459.60 քմ մ², որից՝ ոռոգման ենթակա կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 2000մ² /300քմ մակերեսը կազմում է սիզամարգ/: Կանաչապատ տարածքների ոռոգման համար անհրաժեշտ օրական ջրապահանջը կկազմի՝

$Q=2000 \times 5=10\ 000$ լ/օր: Ընդհանուր կառուցապավող հողամասում ասֆալտապատ և սալիկապատ մակերևույթի լվացման համար անհրաժեշտ օրական ջրապահանջը կազմում է

$$Q= 2715 \times 0.5=1357$$
լ/օր

Ոռոգման և տարածքների լվացման համար անհրաժեշտ ընդհանուր ջրաքանակը կկազմի՝ 11 357լ/օր:

Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվում է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր մասերում տեղադրվում

են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կազմակերպված ձևով հեռացվում է տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի միացվում գործող քաղաքային 400 մմ տրամագծի հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով հեռացվում է նաև շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե 200-300մմ խողովակներով:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

4.1 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը

Գորիսի Պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջը, որտեղ իրականացվելու են շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, գտնվում է Գորիս քաղաքի Առաքելյան փողոց 32 հասցեում, գոյություն ունեցող քոլեջի տարածքում: Նախագծով նախատեսված աշխատանքների շրջանակները ներկայացված են նախորդ բաժիններում:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. Մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանք կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված /ենթակառուցվածքի սեփականատեր/ ստանալ թույլտվություններ՝ տարածքով անցնող ինժեներական կոմունիկացիաների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ

2. Կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:

4. Տարածքը մաքրել ապամոնտաժված տարրերից, որոնք ժամանակավոր հավաքվում են հատակագծում նշված տարածքներում, որտեղից բարձվում ինքնաթափեր և տեղափոխվում Գորիսի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն
- Առկա շինության ճակատի ուժեղացում և մյուս մասերի քանդում

- Քանդման արդյունքում առաջացած թափոնների տեղափոխում Գորիսի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում: Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

4.2. Շինարարական աշխատանքների բնութագրերը

Քուլեջի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

Նախապատրաստական փուլի աշխատանքներ

1. Քանդման աշխատանքներ
2. Հողային աշխատանքներ
3. Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
4. Պատեր և միջնապատեր
5. Տանիքային աշխատանքներ
6. Ներքին ինժեներական ցանցեր
7. Հարդարման աշխատանքներ
8. Երեսպատման աշխատանքներ
9. Տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

4.3. Քանդման աշխատանքներ կատարման հերթականություն

Քանդման ենթակա մասնաշենքը /որի մակերեսը 720 քմ է/ իրենից ներկայացնում է ե/բետոնյա հավաքովի կոնստրուկցիաներով շինություն, ծայեղնավոր տանիքով: Քանդման աշխատանքները ներառում են.

Տանիքի թիթեղյա ծածկույթի և փայտ հիմնակմախքի քանդում:

Դարպասների , դռների և պատուհանների ապամոնտաժում:

Ե/բետոնյա հավաքովի պատի սալերի ապամոնտաժում:

Ե/բետոնյա հավաքովի ծածկի սալերի ապամոնտաժում:

Ե/բետոնյա հավաքովի ֆերմաների սալերի ապամոնտաժում:

Ե/բետոնյա հավաքովի սյուների ապամոնտաժում:

Ե/բետոնյա հատակի քանդում :

Ե/բետոնյա կետային հիմքերի և կապերի քանդում:

Քանդման աշխատանքներ ժամանակ անհրաժեշտ է տեսակավորել բոլոր վերադարձվող նյութերը, կրկնակի օգտագործելու համար: Արտաքին քանդման աշխատանքների ժամանակ քաղաքային պայմաններում փոշու նվազեցման համար նախատեսված է քանդվող տարածքը հաճախակի ջրցանել:

Քանդման արդյունքում առաջացող ոչ պիտանի շինարարական թափոնները և աղբը տեղափոխվելու են Գորիսի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Աղյուսակ 3. Քանդման աշխատանքների բնութագրերը

<i>N</i>	Նյութերի և թափոնների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Հեղազա օգտագործումը
1	Բետոնային կոնստրուկցիաների, քարի, կապակցող նյութերի քանդվածքներ	խ.մ.	2950.0	Տեղափոխվում Գորիսի քաղաքապետի կողմից հատկացված վայր
2	Շինարարական աղբ	խ.մ	3309.4	Տեղափոխվում Գորիսի քաղաքապետի կողմից հատկացված վայր
3	Փայտե պարագաների, կոնստրուկցիաների մնացորդներ	խ.մ.	739.24	Օգտագործվում է շինարարության համար
4	Մետաղական մասեր	Ք.մ.	233.5	Օգտագործվում է շինարարության համար
5	Մետաղական խողովակներ	գծմ	2359.5	Օգտագործվում է շինարարության համար
	Ցինկապատ ցացկ	գծմ	128	Օգտագործվում է շինարարության համար

Բնահողեր

Շինարարության ընթացքում մշակման ենթակա բնահողերը պատկանում են III, VI կարգի: Բնահողերի մշակումը և խրամուղու և փոսորակների հատակի մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Օգտակար հանույթի ավելացած մնացորդային բնահողերը տեղափոխվում են 5կմ հեռավորության վրա գտնվող համայնքային թափոնավայր: Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ:

Հետլիցք

Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են օգտակար հանույթի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվոր ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են օգտակար հանույթի փափուկ բնահողերը:

Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվոր ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ:

Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Բետոն

Նախագծում նախատեսված է հիմնականում միաձույլ երկաթբետոն B25 դասի բետոն:

Առաջարկվում է BCC պլաստիֆիկատորի օգտագործում բետոնի մեջ:

Պլաստիֆիկատորի օգտագործումը բերում է՝

1. Ջրի պարունակության նվազեցման առանց խառնուրդի պիտանելիության վնասման,
2. Ցեմենտի խնայողության մոտավորապես 10%-ով (տե՛ս ստորև բերվող օրինակում),
3. Ավելի ամուր, խիտ բետոնի ստացման,
4. Ավելի ամուր, մաշակայուն և ցրտադիմացկուն մակերևույթի առաջացման,
5. Բետոնը առավել քիչ է թափանցելի օդի, ագրեսիվ գազերի ու հեղուկների նկատմամբ,
6. Սեղմման նվազեցում և ֆազաբաժանման ու հոսունության բացառման: Բետոնի տեղադրումը առաջարկվում է իրականացնել հիմնականում բետոնապոմպերի օգնությամբ, որոշ հատվածներում շինկոնքի օգնությամբ:

Քարե շարվածք

Նախագծում նախատեսվում է տուֆ քարե շարվածքի իրականացում: Շարվածքի համար քարը պետք է լինի ամուր, պինդ և երկայակյաց առանց կլիվածի և դեֆեկտների: Ավազը շաղախի համար քարե շարվածքում պետք է համապատասխանի ԳՈՍՏ 8736-93: Շաղախի պատրաստման համար օգտագործվող ջուրը չպետք է պարունակի տիղմ, օրգանական նյութեր, ալկալի, սուլֆատ և ուրիշ խառնուրդներ:

Քարե շարվածքի շաղախը կազմված է մեկ մաս պորտլանդցեմենտից և երեք մաս չոր ավազից և բավարար քանակի ջրից, որը հարկավոր է պահանջվող խառնուրդը ստանալու համար: Շաղախը խառնելու համար օգտագործվող սարքավորումները և մեթոդները, պետք է որոշեն և հսկեն շաղախի մեջ մտնող յուրաքանչյուր կոմպոնենտի քանակությունը:

Խառնվում է շաղախի այնպիսի քանակություն, որը պետք է անմիջապես օգտագործելու համար:

Շարվածքի մեջ օգտագործվող քարը մինչև շարվածքի մեջ տեղադրելը պետք է մաքրվի: Քարը չի տեղադրվում հորդառատ և երկարատև տեղացող անձրևի ժամանակ: Քարը,

որը օգտագործվում է շարվածքի մեջ պետք է թրջվի 3-4 ժամ: Քարե շարվածքը տեղադրվում է լավ պատրաստված և ամուր հիմքի վրա: Քերումից հետո կարերը պետք է սեղմվեն գծամշակվող գործիքով: Քարե շարվածքը ներառյալ գծամշակումը պետք է հասունացվի ջրի ցանումով կամ ուրիշ մեթոդներով, որը թույլ կտա ինժեները: Օգտագործվող ջրի որակը պետք է համապատասխանի մասնագրերի պահանջներին:

Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժ

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32տ բեռնատվություն ունեցող ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունոկությամբ սլաքի շառավիղը 15մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* <Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ>:

4.4. Աշխատանքների անվտանգության իրականացման սարքեր և կանոններ

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախազգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներ:

Աղյուսակ 4. Աշխատանքային պայմանների անվտանգության խախտման նախազգուշակալ միջոցառումները:

Խաղտման հնարավոր հետևանքները	Խաղտման պատճառը	Խաղտման նախազգուշակալ միջոցառումները
Դարսակի քանդում,	Պահեստավորման	Հիմքի պատրաստում 3° -ից

ամբարձիչի ընկնում	տեղամասի չպատրաստված հիմք	ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիչների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում, ճոպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կառճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճոպանի լարում	Նախագգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատասխանություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում, քան տրված է անձնագրում): Չնախատեսված աշխատանքային շարժումների համատեղում	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ ուսումնասիրություն
Էլեկտրականության խափանումներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Ձայնային ազդանշանի բացակայում, նախագգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրատերթ	Աշխատանքների կազմա-	Աշխատանքների իրակա-

<p>բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում:</p>	<p>կերպման նախագծով (ԱԿՆ) հաստատված տեղաշարժման ուղեգծի շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբառձիչ մեխանիզմների ուղեգծի վրա: Ամբարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավորության գերազանցում</p>	<p>նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության, ոչ պակաս քան 1մ, պահպանում</p>
<p>Բանվորի ժամանակից շուտ հորձանություն, գլխապտույտ և փսխում:</p>	<p>Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, գազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում</p>	<p>Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում</p>
<p>Մրսածության հիվանդություններ և ցրտահարում:</p>	<p>Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք</p>	<p>Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում</p>

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ, ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգազիր-թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 50:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* <Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ>:

Շինարարության տնտեսությունը

Շինարարության տնտեսությունը որոշվել է՝ ըստ օրացույցային գրաֆիկի հիման վրա և կազմել է 24 ամիս:

Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- Նախապատրաստական շրջանի տնտեսությունը
- Նախագծվող օբյեկտի շինարարությունը
- Կոմպլեքսային փորձարկումներ և անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:

Աղյուսակ 5. Անհրաժեշտ աշխատուժի հինավորումը շինարարությունում

Մասնագիտություն	Կարգը	Քանակը
Բեդոնագործ	4	20
	3	15
Ամրանագործ	3	17
Զողող	4	6
Առասանող	6	2
Տանիքագործ	5	8
	3	5
Հյուսն	9	5
Պապշար, քարտաշ	4	6
Հարդարող	5	10
	3	8
Էլ. մասնագետ	4	12
Օ.Ջ. մասնագետ	4	12
Կ.Ջ. մասնագետ	4	12
Բանվորներ		30
Տեխնիկական աշխատանքների ճարտարագետ (այդ թվում հակահրդեհային և աշխատանքի անվտանգության մասնագետ)		6
		2
Ընդամենը՝		176

Աղյուսակ 6. Մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակները

Յ/Յ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Մեքենաների քանակը, հատ
1	2	3	4

1	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 7.5տ	3
2	Կողային ավտոմեքենա	բեռնատվ. 5տ	2
3	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 6մ ³ KAMA3 54429	2
4	Ավտոբետոնապոմպ	ABC-6DA	1
5	Կոմպրեսոր	արտադրությունը 10մ ³ /րոպե	2
6	Ավտոամբարձիչ բեռնատվ. 32տ	KAMA3 53229- 1040-15	1
7	Հետահար մուրճ	ՍՕ-10	2
8	Ձեռքի պնեվմատոփիչ	40կգ	1
9	Էքսկավատոր	JSB - JS200W	1
10	Էքսկավատոր	CAT 428F	1
11	Խորքային վիբրատոր 4.5մ Φ51մմ	ԴB224551 220կվ	1
12	Խորքային վիբրատոր 2.0մ Φ35մմ	Zitrek Z-900 045-0049- 220կվ	2
13	Եռակցող ապարատ ձեռքի 10-220A	CAH 220 (MM)	3
14	Ձեռքի էլեկտրոգործիքներ	–	10

Պահանջվող մարկայի բետոնի պատրաստումը նախատեսվում է կենտրոնացված բետոնախառնիչ հանույցում, համալրված կշռային բաժնավորիչներով: Տվյալ հանույցը տնվում է շինհրապարակից դուրս:

4.5. Ժամանակավոր շինարարական տնտեսություն

Առաջարկվում է կազմակերպել մեկ շինարարական տնտեսություն համապատասխան օժանդակ կառույցներով և կտեղադրվեն իրենց համար հատկացված տեղում, ոչ օգտատրծվող հողատարածքների վրա:

Աղույսակ 7.Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

Հ/հ	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգ. կՎտ	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Ճարտարագիտա տեխնիկական անձնակազմի գրասենյակ աշխատողի համար 3	1.0	6.0 x 2.45	1.764	Շարժական տնակ

2	Հանդերձարան չորանոցով	1.0	6.0 x 2.45	1.764	Շարժական տնակ
3	Շարժական տնակ տնտեսական գույքի պահպանման համար	1.0	6.0 x 2.45	1.764	Շարժական տնակ
4	Սան.հանգույց լվացարանով	1.0	2.45 x 2.45	0.784	Շարժական սան.հանգույց
5	Ճաշարան	1.0	6.0 x 2.45	1.764	Շարժական տնակ
6	Կենցաղային աղբարկղ	2.0	1.0 x 0.8		Մետաղական

Վերոնշյալ ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցանկը կազմված է հաշվի առնելով այն, որ շինարարությունը կատարվելու է ք.Գորիսում:

4.6. Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում (ըստ անհրաժեշտության),
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Գորիսի Պր. Խ. Երիցյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջի /որտեղ իրականացվելու են շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները/, տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 'Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր' նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

- Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում՝ 115.08 խմ
- 3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով՝ 120.72 խմ
- 3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով, կողից՝ 380.0 խմ
- 2-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով, կողից՝ 345.90 խմ
- Ավելորդ գրունտի բարձում էքսկավատորով՝ 235.8 խմ, տեղափոխում 5 կմ հեռավորության վրա:

Քոլեջի նոր մասնաշենքի կառուցման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ժամանակ ընդհանուր հանույթը կազմում է 847 մ³: Վերջինից՝ 235.8 խմ ծավալը նախատեսվում է տեղափոխել Գորիսի քաղաքային աղբավայր՝ համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմնի հետ: Մնացած՝ 610.8 մ³ հանույթը կկիրառվի հետլիցքի նպատակով: Քանդված՝ 115.08 խմ ծավալով ասֆալտբետոնե ծածկույթը կտեղափոխվի առանձին:

Ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից շինարարության տարածքը պետք է սահմանազատել: Շին. տարածքում նախատեսված է ժամանակավոր թափոնակույտ, որտեղ կուտակվող գրունտը հետագայում կօգտագործվի հետլիցքի համար: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես գոյություն ունեցող քոլեջի տարածքի սահմաններում:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտեյնրների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նաև բիոզուգարաններ և փակ պահեստ: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեքենայացման բազայում:

4.7. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Քուլեջի նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ըստ նախնական հաշվարկների ջրցանի համար ջրի օրական ծախսը կկազմի՝ 0.3մ³, իսկ տարեկան՝ 46.2մ³/շին.ժամ, իսկ խմելու և կենցաղային նպատակների 90.4 մ³/շին.ժամ, միջին օրեկան 0.587մ³: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Շինարարական աշխատանքներից բուսահող չի առաջանում, քանի որ տարածքը ամբողջովին կառուցապատված է: Այլ բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում:

Աղյուսակ 2-ում ներկայացված են շինարարության ժամանակ անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկը՝ հիմնված աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վրա:

Աղյուսակ 8.

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
2.	Ջուր	լ/վրկ	0,1
3.	Խտացված օդ	հատ (100լ/ր)	1 կոմպրեսոր

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

5.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Սյունիքի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Գորիս քաղաքը տեղադրված է Որոտանի ձախափնյա վտակ Վարարակի (Գորիս) հովտում: Տարածքի կենտրոնով անցնում է Գորիս գետը, որը սկիզբ է առնում Իշխանասար լեռան արևելյան լանջից: Քաղաքի տարածքում այն ունի լայն, հարթեցված ողողահուն, քաղաքից դուրս գալուց հետո հունը նեղանում է և փոխվում կիրճի: Գետի երկարությունը 30 կմ է, սնվում է աղբյուրների, ձնհալքի, անձրևաջրերով:

Գորիս քաղաքը մարզկենտրոնից գտնվում է 65 կմ հեռավորության վրա, իսկ Երևան քաղաքից՝ 236 կմ հեռավորության վրա: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1459,3-1466,8մ բարձրությունների վրա:



5.1 Շրջանի գեոմորֆոլոգիան

Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է միջին բարձրության լեռնային գոտի, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներ, v-աձև խորը կիրճերով և գետերով կտրտված լանդշաֆտ: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն և ջրաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 5°-100°:

Գորիս քաղաքի տարածքը (ըստ ՀՀՇՆ II-7.01.96 շինարարական նորմերի) գտնվում է չափավոր շինարարակլիմայական գոտում՝ տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով, Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +35°C (Գորիս կայան): Իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -20°C (Գորիս կայան): Տարեկան օդի միջին խոնավությունը 70% է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 744մմ: 25 տարվա ընթացքում հնարավոր են 34մ/վրկ, 50 տարվա մեջ 38մ/վ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 70կգ/մ2 :


Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 47սմ: Ձյան բեռնվածքի ճնշումը 50կգու/մ2 է: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 27սմ-ի:

5.3. Շրջանի կլիմայական պայմանները

Շինարարության տարածքը գտնվում է Գորիս քաղաքում: Գորիս քաղաքի տարածքը (ըստ ՀՀՇՆ II-7.01.96 շինարարական նորմերի) գտնվում է չափավոր շինարարակլիմայական գոտում՝ տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով, Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +35°C (Գորիս կայան): Իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -20°C (Գորիս կայան): Տարեկան օդի միջին խոնավությունը 70% է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 744մմ: 25 տարվա ընթացքում հնարավոր են 34մ/վրկ, 50 տարվա մեջ 38մ/վ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 70կգ/մ2 :

Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 47սմ: Ձյան բեռնվածքի ճնշումը 50կգու/մ2 է: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 27սմ:

Ստորև նկար 6-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը:



Աղյուսակներում բերվում է շինարարական տեղանքի կլիմայական տվյալները:

ՕԴԻ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ

Աղյուսակ № 1.

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակեր. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °հ												Միջին տարվա կտրվածքով	Բացարձակ միջինում	Բացարձակ մաքսիմում
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Գորիս	1466.8	-3	-1	3	10	13	18	22	20	17	12	7	1	13.0	-7.0	24.0

ՕԴԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ № 1-1.

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 13-ին	
	ըստ ամիսների												ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					
Գորիս	68	69	65	58	57	50	43	45	49	59	63	68	62	48	78		

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՉՅՈՒՆԱԾԱԾԿՈՒՅԹԸ

Աղյուսակ № 1-2.

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը, մմ միջին ամսական օրական առավելագույնը												Չյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ճյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Գորիս	36	44	64	92	107	82	43	35	57	57	42	35	604	13	50	66

5.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Քաղաքը հյուսիսից սահմանափակվում է սարահարթով, որի եզրերը դեպի քաղաք իջնում են խորը հեղեղատներով և ձորերով, արևելքից շրջափակվում են հողմահարված տուֆաավազաքարերից առաջացած զարմանահրաշ ձևերով (բուրգերով, սյուններով), իսկ արևմուտքից՝ 4-5 մակարդակի էրոզիոն տերրասներով, որոնց նիշերը տարբերվում են 25-40 մետրով: Այդ տերրասների թեքությունները գետի ողողահունում մեղմանում են, վերածվում հարթավայրի, որտեղ և տեղադրված է քաղաքային տարածքի կենտրոնական մասը: Ուսումնասիրվող տարածքը ներկայացնող հիմնական ապարները կավային և մանրախճային են:

Ըստ ֆոնդային նյութերի, տարածքի մանրամասն տեղազննման, լաբորատոր ուսումնասիրման և այդ տվյալներով պայմանավորված, նախկին տարիներին կատարված

հետազննությունների հիման վրա, պարզ է դառնում, որ տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերևից-ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 7 շերտերը:

Վերը նշվածով պայմանավորված տրվում են դրանց ֆիզիկա-մեխանիկական հակությունների միջինացված ցուցանիշների տվյալները՝ (տես աղյուսակ 1.1, 1.2):

№ 1 շերտ Կավ մուգ շագանակագույն, խոնավ, պինդ թանձրության, մանրախճի պարունակությամբ:

Դեյյովիալ-պրոյովիալ առաջացումներ են:

Շերտի հորատված հզորությունը 3.2 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (8բ) III կարգ է:

№ 2 շերտ Ավազակավեր շագանակագույն,

խոնավ, ձիգ պլաստիկ թանձրության, մանրախճի պարունակությամբ:

Դեյյովիալ-պրոյովիալ առաջացումներ են:

Շերտի հորատված հզորությունը 1.8 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (33բ) II կարգ է:

№ 3 շերտ Ավազակավեր շագանակագույն,

խոնավ, կիսապինդ թանձրության, հազվադեպ մանրախճի պարունակությամբ:

Դեյյովիալ-պրոյովիալ առաջացումներ են:

Շերտի հորատված հզորությունը 2.4-10 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (33բ) III կարգ է:

№ 4 շերտ Ավազակավեր շագանակագույն,

խոնավ, պինդ թանձրության, հազվադեպ մանրախճի պարունակությամբ:

Դեյյովիալ-պրոյովիալ առաջացումներ են:

Շերտի հորատված հզորությունը 4.4-8.0 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (33բ) III կարգ է:

№ 5 շերտ Կավավազային գրունտ մանրախճի պարունակությամբ:

Դեյյովիալ-պրոյովիալ առաջացումներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (34բ) II կարգ է:

№ 6 շերտ Մանրախճային գրունտ ավազակավային-կավավազային 20-25% լցանյութով, տեղ-տեղ խճաքարերի պարունակությամբ:

Դեյյովիալ առաջացումներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (39a) II կարգ է:

№ 7 շերտ Մանրախճային գրունտ, տեղ-տեղ խճաքարերի պարունակությամբ:

Դեյյովիալ առաջացումներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝

համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի (396) III կարգ է:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները՝

1.Տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական տեսակյունից պիտանի է շինարարական աշխատանքներ կատարելու համար:

2. Ուսումնասիրվող տարածքում, ըստ հորատված հորատանցքների, գրունտային ջրերը բացակայում են:

3.Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթներ չեն նկատվում: Ըստ սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզի ուսումնասիրման, շրջանը պատկանում է 1-ին գոտուն, մինչև 8 բալ սեյսմիկությամբ:

4. Ըստ սեյսմիկ հատկությունների, համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006թ. գրունտները, որոնք ընկած են այդ տարածքում պատկանում են III-րդ կարգին:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են խիստ ճեղքավորվածությամբ: Գետնի մակերեսից 3-5 մ-ից բարձր գտնվող գրունտային ջրերի տեղամասեր հանդիպում են միայն Որոտան գետի և նրա վտակների դարավանդներում:

Ուսումնասիրվող տարածքում համաձայն ուսումնասիրությունների արդյունքների՝ հորատված հորատանցքների անցմամբ (10.0մ), գրունտային ջրեր չեն բացահայտվել:

5.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Գրունտներն ըստ սեյսմիկ հատկանիշների համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006թ. III կարգի են: Համաձայն ՀՀ ՇՆ II - 6.02-2006 շրջանը և տեղամասը մտնում է II (առաջին) սեյսմիկ գոտու մեջ, մինչև 8 բալլ սեյսմիկությամբ: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.2g:


Կատարվել է բնական կազմի գրունտների նմուշների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություններ,(տես լաբորատոր արդյունքները էջ 34):

Տվյալ արդյունքներով պարզ է դառնում, որ գրունտները կառույցների հիմքերի խորությունների վրա հիմնականում ոչ ժայռային են: Ստացված տվյալների հիման վրա պարզ է դառնում կառույցի հարթակի երկրաբանալիթոլոգիական կտրվածքները:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի տարածքում կատարված սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքների արդյունքում գնահատվել են գրունտներում սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները կազմում են

- 0.1g-0.2g
- 0.2g-0.3g

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ:



5.6. Մթնոլորտային օդի որակի բնութագիր

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (Հայէկոմոնիթորինգ) կողմից: Հայէկոմոնիթորինգը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Հայէկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց 10 – 50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Գորիս քաղաքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

- Փոշի՝ 0.3 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.05 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Այս թվերը կարելի է որպես հիմք ընդունել ազդակիր համայնքների մթնոլորտային օդի որակը գնահատելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում և սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում գործունեության ենթակա և շրջակա տարածքներում չի սպասվում:

5.7. Ջրային ռեսուրսներ

Նկարագրվող տարածքի հիմնական ջրային միավորը Որոտան գետն է: Որոտանը գետ է, որն անցնում է Հայաստանի տարածքով: Սյունիքի մայր գետն է, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից՝ 3045 մ բարձրության վրա գտնվող Խալխա լճակից ու հարակից աղբյուրներից, իր մեջ է ընդունում ևս մի քանի մանր լճակներից հոսող առվակների, ինչպես նաև Գորայք գյուղի աղբյուրների ջուրը, ապա դեպի հարավ-արևելք ուղղությամբ հոսում Սիսիանի, Գորիսի տարածաշրջանների տարածքով, ներառում Հագարի Աղվանո վտակը և Միջնավան կայարանից միախառնվում Արաքսին: Երկարությունը 178 կմ է, ՀՀ սահմաններում՝ 119 կմ, ավազանը 5650 կմ², ՀՀ սահմաններում 2300 կմ²:

Որոտան գետի վրա կառուցված է հիդրոկայանների կասկադ՝ երեք հիդրոկայաններով՝ 404,2 մեգավատ հզորությամբ, տարեկան 1,1 միլիարդ կվտ-ժամ էլեկտրաէներգիայի արտադրությամբ, և չորս ջրամբարներով (Սպանդարյանի, Անգեղակոթի, Տոլորսի, Շամբի): Սպանդարյանի ջրամբարից՝ կառուցվել է 22 կմ երկարությամբ Արփա-Սևան թունելը, որը տարեկան 200 միլիոն խմ ջուր է տեղափոխում Սևանա լիճ: Որոտանը համեմատաբար ջրառատ գետ է. նրա տարեկան հոսքը կազմում է մինչև 600-700 միլիոն խմ: Որոտանի հոսանքը սրընթաց է, ունի հունի մեծ անկում, որը կազմում է 0,012, այսինքն՝ մեկ կիլոմետրին 12 մետր:

5.8. Հողային ռեսուրսներ

Դիտարկվող տարածաշրջանում տարածված են սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերը, որոնք տիպիկ են առավել զառիթափ լանջերի, կիրճի անտառածածկ վերին հատվածների, բարձրադիր տափաստանների, սարահարթային խոտհարքների և նախալեռնային շրջանների համար: Հողի վերին բերրի շերտը որպես կանոն բնութագրվում է սակավահողությամբ: Առավել մեղմաթեք լանջերում այն միջինում 0,15մ է և ծածկված է ենթահողային հորիզոնով, որի հաստությունը տատանվում է բարակից մինչև 0.5մ սահմաններում: Հողերը սև կամ մուգ դարչնագույն-շագանակագույն ավազակավեր են՝ տեղ-տեղ քարքարոտ կամ մանրախճային կազմով և թույլ ստրուկտուրայով: Հողերը թթվային են՝ կրի ցածր պարունակությամբ կամ կրազերծ: Բուն հանքավայրի տարածքի հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով:

Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի դիտարկվում, քանի որ նոր հողաձածկ տարածքներ չեն ներառվելու, հողաձածկի վնասում և խախտում չի լինելու, օգտագործվելու է արդեն օգտագործված ասֆալտապատ և կառուցապատված տարածքները:

5.9. Կենսաբազմազանություն

5.9.1. Բուսական աշխարհ

Դիտարկվող տարածաշրջանը գտնվում է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում: Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմաններն են՝ 600- 3900մ ծ. մ.: Բուսական համակեցությունների հիմնական տիպերն են կիսաանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ ամենաբազմազանն է՝ 2000 բուսատեսակ:

Տարածքներում Ֆլորան հիմնականում տարախոտային է, խիտ անտառները բացակայում են: Ծառատեսակներն արտահայտված են հիմնականում քսերոֆիլ նոսր անտառային բուսականության տիպով՝ սաղարթավոր խառը տեսակների մասնակցությամբ և սալորենու, տանձենու տեսակներով: Տեղ-տեղ արտահայտված են թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը: Թփերը հիմնականում նոսր ձևով հանդիպում են բոլոր տարածքներում, գերադասելով խոնավ ապրելավայրերը: Տարածքի լեռնատափաստանային բուսականությունն աչքի է ընկնում տարախոտա-հացազգային մասնակցությամբ: Այս լանդշաֆտային գոտում ամենաշատ տեսակներով աչքի են ընկնում բարդաձաղկավորները՝ 49 տեսակ, հացազգիները՝ 34 տեսակ, լրբազգիները և վարդազգիները՝ 23-ական տեսակներ, խաչաձաղկավորները՝ 7տեսակ: Վայրի դեղատու և ուտելի բույսերի ցանկում ընդգրկված են է շուրջ 100 բուսատեսակներ:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված կառուցապատված են՝ զուրկ բնական բուսական ծածկույթից և հողային ծածկույթից: Նախատեսված աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

5.9.2. Կենդանական աշխարհ

Լեռնատափաստանային գոտու անողնաշարավոր կենդանիների ֆաունան համեմատաբար աղքատ է: Այս գոտին առավել բարենպաստ է թփուտային դաշտամկան (Msubterraneus), կզաքիսի (Martes foina), աղվեսի (Vulpes vulpes), գայլի (Canis lupus) և այլ տեսակների համար:

Կաթնասունների գիշատիչ տեսակներից միայն գորշ արջն է գրանցված ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում: Չղջիկները ներկայացված են ՀՀ-ում լայն տարածված տեսակներով:

Մողեսները ներկայացված են երկու տեսակներով՝ կովկասյան ագամա և միջին մողես (Laudakia caucasia, Lacerta media): Երկկենցաղները նույնպես ներկայացված են լայն տարածված 2 տեսակներով՝ կանաչ դոդոշ, փոքրասիական գորտ (Bufo viridis, Rana

macrocnemis), որոնք հիմնականում հանդիպում են ջրահոսքերում և պահպանության կարիք չունեն:

Թռչունները բազմազան են, որը պայմանավորված է հետազոտվող տարածաշրջանի ռելիեֆի բազմազանությամբ՝ դաշտավայր, քարքարոտ բլրալանջեր, որոնք հարմար բնադրավայր են արտույտների, քարաթռչնակների և այլ մանր տափաստանային թռչունների համար: Շատ են նաև գիշատիչ թռչունները, որոնց կերի բազան մանր կրծողներն են: Դիտարկվել են Թխակապույտ աղավնին /Columba livia gaddi/, Մեծ ճուռակը /Buteo buteo/, Տափաստանային ճուռակը /Buteo rufinus/, Դաշտային ճնճուկը /Passer montanus, Սովորական քարաթռչնակը /Oenanthe oenanthe/, Սևավիզ քարաթռչնակը /Oenanthe finschii/, Սևագլուխ դրախտապանը /Emberiza melanocephala, Դաշտային արտույտը /Alauda arvensis/, Եղջրավոր արտույտը /Eremophila alpestris/, Կանեփուկը /Carduelis cannabina, Սովորական ոսպնուկը /Carpodakus erythrinus bella/, Սովորական հողմավար բազեն /Falco tinnuncius/, Հոպոպը /Uoupa epops/: Բազմաթիվ են նաև հավազգիների ներկայացուցիչները, որոնք ներկայացված են մոխրագույն կաքավով և լորով: Սողուններից հնարավոր է հանդիպել՝ Ռադդեի ժայռային մողես / Radde's Lizard նկ. 31/, Վալենտինի ժայռային մողես / Darevskia valentini/, Միջին մողես /Lacerta media/, Համեստ էյներիս /Eirenis collaris/, Բազմերանգ իժանման սահնօժ /Hemorrihois ravergieri/, Արևելյան քառաշերտ մագլցող սահնօժ /Elaphe sanromates/, Սովորական պղնձօժ /Coronella austriaca/, որոնց համար բնակության կենսամիջավայր կարող է հանդիսանալ տարածաշրջանի քարքարոտ տեղամասերը:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Գորիս համայնքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա բնապահպանական տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

5.9.3. Տարածաշրջանի վրանգված էկոհամակարգեր, բնության հարուկ պահպանվող տարածքներ

Գործունեության ենթակա տարածքը չի առնչվում բնապահպանական տարածքների, բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների հետ: այնուհանդերձ ստորև բերվում է ասըունիքի մարզում գոյություն ունեցող բնապահպանական տարածքները և բնության հուշարձանները:

"Սատանայի կամուրջ"

Տաք ջուր – Որոտանի վրա գտնվում է Հայաստանի բնության հրաշալիքներից մեկը "Սատանայի կամուրջ"-ը: Այն ջրի խելահեղ հոսանքի



Վրա կախված անձեռագործ բնական տանիք է՝ մոտ 150 մետր լայնությամբ և 200 մետր երկարությամբ: Կամուրջը կազմված է կրաքարից և տրավիրտինից, ունի հարթ մակերևույթ: Նրա առանձին փոսերում պղպաղակներ արձակելով բխում են տաք հանքային աղբյուրներ: Կիրճի երկու զառիթափի լանջերը ևս կազմված են տրավերտինից, որոնք դեղնակարմրավուն քարափների երկու կողմից 250-300 մետր բարձրությամբ պարիսպներով իջնում են կամրջի եզրին: Այդ քարափները այնքան իրար մոտ են, որ կազմում են ընդամենը 180-200 մետր լայնությամբ մի նեղ միջանցք: Կամրջի բարձրությունը գետի մակերևույթից կազմում է մոտ 100 մետր: Նրա տակ կուտակված տրավերտինե սյուները, վիթխարի ստալակտիտներ, կախված են գետի վրա և ունեն դեղին գույն, իսկ ներքևում հետզհետե կանաչում են նմանվելով փրփրագեղ ջրերին: Այդ ստալակտիտները առաջանում են շրջակա քարափների և հենց կամրջի ընդերքում հոսող հանքային ջրերի մեջ լուծվող կալցիումի և այլ աղերի անջատումից: Տեղի բնակիչները վաղ ժամանակներում չկարողանալով բացատրել երկրաբանական այդ պրոցեսները, այն համարել են սատանայի գործ, իսկ կամուրջը "Սատանայի կամուրջ": Դարեր շարունակ ժողովուրդները այդ ջրերը օգտագործել են զանազան հիվանդությունների, հատկապես ռեմատիկ, բուժման համար:

Շաքեի ջրվեժ



Գտնվում է Որոտանի կիրճում, Սիսիանից 3 կմ հյուսիս-արևմուտք, Որոտանի ձախակողմյա Շաքե վտակի վրա: Բարձրությունը 18 մ է: Շաքեն Հայաստանի ամենաբարձր և գեղեցիկ ջրվեժն է, այն մշտապես գրավել է այցելուներին և եղել զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում: Ջրվեժը հավասարապես գեղեցիկ է տարվա ցանկացած եղանակին: Հեռավորությունը միջպետական մայրուղուց 4 կմ է:

<<Զանգեզուր>> արգելավայր



"Զանգեզուր" արգելավայրը ստեղծվել է 2009 թ. հոկտեմբերի 15-ին (<< կառավարության N1187-Ն որոշում) և հանդիսանում է նոր պահպանվող տարածքներից մեկը, որի նպատակն է ապահովել Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և

մարգագետնատափաստանային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումը: Այն գտնվում է "Շիկահող" պետական արգելոց" պետական ոչ առևտրային կազմակերպության ենթակայության տակ: Արգելավայրի տարածքը կազմում է 17369 հա, զբաղեցնում է Զանգեզուրի լեռնաշղթայի Ողջի և Գեղի գետավազաններն ու Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերը և սահմանակցում է Քաջարան քաղաքի լեռնագործական շրջանին և Մեղրու լեռնաշղթային՝ արևելքում ու Ադրբեջանի Նախիջևանի Հանրապետության "Օրդուբադ" ազգային պարկին՝ հարավ-արևմուտքում:



<<Խուստուփ>> պետական արգելավայր

<<Զանգեզուր>> կենսալորտային համալիր>> ՊՈԱԿ-ի ստեղծման հետ միասին ստեղծվել է «Խուստուփ» պետական արգելավայր մ/ճ: Այն զբաղեցնում է 6946.74հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: <<Խուստուփ>> պետական արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը << Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի

զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:



"Սև լիճ" արգելավայր



Սև լիճը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռնաստորոտի խառնարանային մասում՝ 2658 մ բարձր. վրա: Անհոսք քաղցրահամ լիճ է: Մակերեսը մոտ 240 հեկտար է, երկարությունը՝ 1,6 կմ, լայնությունը՝ 1,2 կմ, առավելագույն խորությունը մոտ 7,5 մ է, ջրի ծավալը՝ ավելի քան 9 մլն մ³: Լիճը

կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, որոնք լցվել են լեռան խառնարանը: Լիճը շրջապատող տարածքը ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները, 102 տիպի անոթավոր բույսերն ու ալպյան գոտու բուսական և կենդանական համակեցություններ:

"Սև լիճ" արգելավայրը հիմնադրվել է ՀՀ կառավարության 12.10.2001թ. Ն-975 որոշմամբ՝ ՀՀ կառավարության 17.10.1987թ. N717 որոշմամբ ստեղծված արգելոցի բազայի վրա:

5.9.4. Գորիսի փարածաշրջանի բնության հուշարձանների ցանկ

Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2008թ. <<ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին>> թիվ 967 -Ն որոշման

53.	«Սատանա» բնական քանդակ	Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
54.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Գորիս քաղաքի շրջակայքում
59.	«Խորձոր» V-աձև կիրճ	Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
60.	«Անանուն» երոզիոն ռելիեֆ	Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
61.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
65.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ եզրին
66.	«Անանուն» սյունաձև բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ եզրին
67.	«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
68.	«Անանուն» բուրգանման մնացուկներ	Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
69.	«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
70.	«Բնական թունել»	Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
34.	«Մեծ Նովի» աղբյուր	Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփ-եզրին, խաչքարի մոտ
35.	«Որոտան» աղբյուր	Որոտան գյուղի հս ծայրամասում
23.	«Շինուհայր» ջրվեժ	Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
9.	«Որոտան» բնապատմական համալիր	Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
10.	Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ

- քանդման ընթացքում /ասֆալտբետոնե ծածկեր, գոյություն ունեցող շենքի միջնորումներ, հատակ, տանիք և այլն/,
- նոր կառուցվող մասնաշենքի շինարարության ընթացքում
- հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

6.2 Օդի աղտոտում

Նոր մասնաշենքի կառուցման շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով,

որոնք առաջանում են առկա շինության մի մասի քանդման, նոր մասնաշենքի հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

ա) Քանդման աշխատանքներ

Պատերի, առաստաղի, աստիճանների և հատակների քանդման ընթացքում առաջանում են փոշու արտանետումներ: Քանի որ հատուկ մեթոդակազ քանդման աշխատանքների համար չկա, այստեղ կիրառվել է “Շինարդյունաբերության չկազմակերպված աղբյուրների արտանետումների հաշվարկման” ուղեցույցի N2 բանաձևը.

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

- K1 -ը փոշու զանգվածային բաժինն է քանդված թափոններում, 0.03
- K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէրոզոլային մասնիկների, 0.02
- K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0
- K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1
- K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում քանդված զանգվածի խոնավությունը, 0.4 /հաշվի առնելով ջրցանը/
- K7 –ը գործակից է, որը հաշվի է առնում զանգվածի չափերը, 0.1
- B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6
- G -ն՝ քանդված զանգվածն է, տ/ժ

Քանդման աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 2,0 ամիս կամ

$$2.0 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 352 \text{ ժամ/շինարարություն:}$$

Քանդման ընդհանուր զանգվածը կազմում է $G = 2950 \text{ մ}^3 : 352 = 8.38 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով միջին տեսակարար կշիռը՝ $8.38 \text{ մ}^3/\text{ժամ} \times 2 \text{ տ}/\text{մ}^3 = 16.76 \text{ տ}/\text{ժամ}$:

$$Q = 0.03 \times 0.02 \times 1.0 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0,6 \times 16.76 \times 10^6 / 3600 = 0,067 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները քանդման աշխատանքների ժամանակ կկազմեն՝

$$0.067\text{գ/վ} \times 352\text{ժ}/2 \times 3600 \text{ վ}/10^6 = 0.085 \text{ տ}/\text{շին.ժամանակահատված}$$

բ) Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

- K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05
- K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէրոզոլային մասնիկների, 0.02
- K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.7 /հաշվի առնելով ջրցանը/

K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 2,5 ամիս կամ

$$2.5 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 440 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=1000 \text{ մ}^3 : 440 = 2.27 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $2.27 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{ տ}/\text{մ}^3 = 3.86 \text{ տ}/\text{ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1 \times 0.7 \times 0.4 \times 0.6 \times 3.86 \times 10^6 / 3600 = 0,18 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝

$$0.18\text{գ/վ} \times 440\text{ժ}/2 \times 3600 \text{ վ} /10^6 = 0.285 \text{ տ/շին.ժամանակահատված:}$$

Ընդամենը փոշու արտանետումները կկազմեն՝ $0.085 + 0.285 = 0.37 \text{ տ/շին.ժամանակահատված:}$

Վարկյանում առաջացող արտանետումները չեն գումարվում, քանի որ քանդման աշխատանքները և նոր շինարարությունը կատարվում են տարբեր ժամանակ:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողների լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

6.3. Զրոգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 7

N - ջրածախսի նորման - 0.016մ³,

n₁ - բանվորների թիվն է - 19,

N₁ - ջրածախսի նորման բանվորների համար - 0.025մ³/մարդ օր<

T - փոշենստեցման համար աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝

154 օր:

Այսպիսով՝ $W = (7 \times 0.016 + 19 \times 0.025) \times 154 = 90.4$ մ³/շին.ժամ, միջին օրեկան 0.587մ³:

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, 200 մ²,

K - ջրցաման նորման - 0.0015մ³/1մ²

T - աշխատանքային օրերը, 154 օր

Այսպիսով՝ $V_1 = 200 \times 0.0015 \times 154 = 46.2$ մ³/շին.ժամ:

Միջին օրեկանը կազմում է 0.3մ³:

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$V_1 \times (1 - L)$, որտեղ L - կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$46.2 \times (1 - 0.05) = 43.9$ մ³, միջին օրեկան՝ 0.285 մ³:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է Քոլեջի տարածքում առկա կենցաղային հարմարություններից: Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են գործող ցանցերի միջոցով:

Շինարարության ընթացքում մակերևութային ջրերի որակի վրա որևէ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում: Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կկատարվի կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով՝ բացառելով շինհրապարակից հնարավոր արտահոսքերը: Այդ նպատակի համար տարածքի ցածրադիր մասերում տեղադրվելու է անձրևընդունիչ հորեր, որտեղից տարածքի անձրևաջրերը և շինհրապարակի հոսքաջրերը կազմակերպված ձևով

կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

6.4 Բնապահպանական միջոցառումների նկարագիրը

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

6.4.1. Մթնոլորտային օդ

- Օդային աազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումնիրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Քոլեջի մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժման և այնուհետև վերակառուցման և կառուցման շինարարական գործողությունները կառաջացնեն անօրգանական փոշու արտանետումներ: Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժակոն աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որշինարարական թափոնների և հումք տեղափոխող մեքենաների համար կսահմանվի երթեր՝ ըստ ժամանակացույցի, շինհրապարակից դուրս, բնակելի տարածքներին մոտ արտանետումների գերազանցում չի լինի:

Մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով արտանետումները չեն գերազանցի թույլատրելի նորմերը, հայտում նախատեսված միջոցառումների

իրականացմամբ, քանի որ շին հրապարակը բաց տարածք է քամու միջին արագության պայմաններում արտանետումները ենթակա են արագ ցրման, իսկ անբարենպաստ եղամակային պայմանների դեպքում կիրականացվի ջրցան կամ կկարգաբերվեն տեխնիկական միջոցները:

Արտանետումների քանակները կարող են նվազել պայմանավորված երթերի քանակով, ինչպես նաև մեքենաների արագությամբ /այդ ինտերվալը տատանվում է՝ մեքենայի 30 կմ/ժ-50 կմ/ժ արագության սահմաններում, պայմանավորված մեքենաների շարժիչների տեխնիկական բնութագրից/:

Թույլատրելի նորմերի սահմաններում ներկայացված վնասակար նյութերի արտանետումների կառավարումը և դրանց հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն շինարարական հրապարակում պարբերաբար իրականացնելով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը մասնավորապես՝ փոշենստեցման նպատակով նախատեսվում է ջրցանի գործողություններ: Բացի այդ փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, ինչպես նաև վերջիններիս տեղափոխումը նույնպես կիրականացվի բեռնատարերի ծածկված թափքերի պայմաններում: Աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է ԲԿՊ-ի Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում):

6.4.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Բետոնի խառնուրդի պատրաստման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

6.4.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Գորիսի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ Գորիս համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր,
- շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

6.4.4. Աղմուկ

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը Քոլեջին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (քոլեջի շենք, բնակելի և հասարակական շենքեր, հյուրանոցային համալիր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 30-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում աղմուկի մակարդակը նվազեցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները և բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ

հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիրների հեռավորությունը վերակառուցվող քոլեջի տարածքից: Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարատավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

6.4.5. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Գորիս քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինհրապարակում խուսափում շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում որպես այլընտրանքային ճանապարհներ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- շինհրապարակը ցանկապատել և վերահսկել կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ

- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական աղդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 9:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ի Աշխատանքի և առողջության ապահովման պլանում, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

6.4.6 Թափոնների և այլ նյութերի կառավարումը

Գորիսի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ /մնացորդային հողային զանգվածներ, քանդման արդյունքում առաջացող շինաղբ, ասֆալտբետոնյա ծածկույթ և այլն/ որոնք սահմանված կարգով նախատեսված են տեղափոխել Գորիսի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող մնացորդային գրունտը՝ 235.8 խմ ծավալով, կտեղափոխվի 5 կմ հեռավորության վրա գտնվող շինարարական թափոնների աղբավայր: Քանդման աշխատանքներից առաջացող ասֆալտբետոնե ծածկույթը՝ 115.08 խմ ծավալով և 3309.4 խմ ծավալով շինարարական աղբը տեղափոխվելու են Գորիս համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ համապատասխան քաղաքային աղբավայրեր: Ասֆալտբետոնե ծածկույթը կառող է հանձնվել նշված թափոնը վերամշակող ընկերություններին:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող վտանգավոր թափոնները, ինչպիսիք են՝ քսայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար

կապալառուի կողմից այլ աշխատանքներում, կամ կհանձնվեն այդ թափոնների վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպությունների:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացող թափոնները ներկայացված են՝ շինարարական աղբով, ծածկագիր՝ 9120060001004 /վտանգավորության 4-րդ դաս/, քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդները՝ վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410030302033 և բանեցված շարժիչների յուղերի թափոններ, որոնք պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410020102033 (առավելագույն քանակները շինարարության ընթացքում ընդհանուր կկազմեն 50):

Իսկ շինարարության ընթացքում աշխատողների կենցաղային թափոնները կհեռացվեն մոտակա աղբահավաք տարողություններ: Կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4: Օրեկական կտրվածքով կառաջանա առավելագույնը 10կգ կենցաղային աղբ:

6.4.7. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Մասնավորապես հակահրդեհային միջոցառումների նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
 - Շինհրապարակում գտնվող էլեկտրական ենթակայանը, ավտոտրանսպորտային միջոցների և տեխնիկայի կայանման վայրերը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով, միջոցներով:
 - Շինհրապարակում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար ապահովել ջրաղբյուրների ճանապարհների և անցումների ազատ ելքերը,
 - Տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ և այլն
 - Մշտապես իրականացնել արտադրական հրապարակի, աշխատանքային հրապարակների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից,
 - Նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:
- Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

Միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):

- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
- Կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում,
- Հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովեն խմելու ջրի, կենցաղային կեղտաջրերի հեռացման և հանգստի կազմակերպան պայմանները և այլն:
Աշխատողների համար նախատեսվող ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցանկը ներկայացված է հայտի 3.4 բաժնում:

6.4.7. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության: Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Քոլեջի տարածքում կան դեկորատիվ ծառատեսակներ և սիզամարգի տեսքով կանաչապատ տարածքներ, որոնք շինարարության հետևանքով որևէ վնաս չեն կրի: Նախագծով նախատեսված աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել, իրականացնել ցանկապատման աշխատանքներ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատման համար նախատեսվում է նաև նոր բուսահողի լիցք: Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսները կազմում են 2500 քմ: Նոր կանաչապատ մակերեսները կկազմեն մոտ 1000 քմ մակերես, հասցնելով քոլեջի ողջ տարածքում կանաչապատման ընդհանուր մակերեսը 3460 քմ /առկան և նախատեսվողը միասին/:

Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդաձև ակացիա և հացենի և թփատեսակներ: Այս տեսակները հարմար են Գորիսյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Ոռոգումն իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից՝ բարելավվելով այն: Նոր տարածքների ոռոգումը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ 5.5 խմ/օր ոռոգման համակարգի ջրի ծախսով: Ոռոգման ենթակա կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 2000մ² /որից 300քմ մակերեսը կազմում է սիզամարգ/: Թփերի վերատնկման վայրը կիրականացվի նախագծի կանաչապատման պլանին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը

- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանեցնել նախագծի կանաչապատման պլանին,
- ապահովել թփերի 90% կաջողականությունը:
- Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

7. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու կապալառուին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի գործողությունները	Հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>Բացասական ազդեցություններ՝</p> <p>Քոլեջի շինարարության և շահագործման փուլերում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի և Քոլեջի վերակառուցման ծրագրի բնապահական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման</p>	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:</p> <p>- Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում</p> <p>- Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում</p> <p>Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային</p> <p>- Անհրաժեշտ է նշանակել բնապահական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագրուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>- Աշխատանքները կիրականացվեն ապահով և</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկողը</p>

<p>Աշխատողների , Քուլեջի աշխատակիցների և աշակերտների , ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>ն:</p>	<p>կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: 		
<p>.Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ այլ ինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;</p>	<ul style="list-style-type: none"> - Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազրակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Գոյություն ունեցող շինությունների վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման ընթացքում հատուկ արողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն և չեն առաջացնի կուտակումներ - Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից զոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով - Շրջակա արածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով 	<p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկողը</p>

		- Շինարարական տրանսպորտային միջոցների պարապորդ շինհրապարակում չի թույլատրվի		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու - ընթացակարգերը; Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;	Կապալառու	Տեխնիկական վերահսկող ը
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	- Շինարարական անձնակազմը կօգտվի տարածքում գոյություն ունեցող կոյուղաջրերի հեռացման համակարգերից՝ կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, - Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է վացվեն նախատեսված տարածքներում, բացառելով արտահոսքը շրջակա տարածքներ:	Կապալառու	Տեխնիկական վերահսկող ը
Հետիոտների և երթևեկության	Շինարարական աշխատանքներ	- Շինարարության ազգային նորմերի համաձայն անվտանգություն և շինարարությանն առնչվող	Կապալառու	Տեխնիկական վերահսկող

<p>ապահովություն</p>	<p>րի հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտի ն սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>երթևեկության կարգավորում,</p> <ul style="list-style-type: none"> - պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ - Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: - Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: - Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և հատուկ հանդերձավորված անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. - Պետք է ապահովվի անվտանգ և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում: 		<p>Ը</p>
<p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; 	<p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող Ը</p>
<p>Շինհրապարակ</p>		<p>- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել</p>	<p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական</p>

<p>կի վերականգնում</p> <p>Քոլեջի տարածքի բարեկարգում/կանաչապատում</p>		<p>շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն;</p> <p>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>- մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>- մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;</p> <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p>	<p>Կապալառո</p> <p>Քոլեջի տնօրինություն/</p> <p>Կապալառու Քոլեջի տնօրինություն</p>	<p>ան վերահսկող</p>
---	--	--	--	---------------------

Մեղմացնող միջոցառումների ինդիկատորիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1,2%

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ


Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՛վ է իրականացնում մոնիտորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	ՀՏՀՀ
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	ՀՏՀՀ Գորիսի քաղաքապետարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Գորիս քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Վերահսկող խորհրդատու
Գոյություն ունեցող շենքի քանդում	<ul style="list-style-type: none"> - Քանդման ընթացքում ջրցան - Քանդման մնացորդների պահեստավորում հատուկ հատկացված տեղամասում և աշխատանքների ավարտից հետո ընդհանուր շինաղբի հետ տեղափոխում քաղաքապետարանի կողմից հատկացված վայր - փայտե կոնստուկցիաներ, մետաղական մասերի և խողովակների օգտագործում շինարարության ընթացքում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Քանդման ընթացքում	Վերահսկող խորհրդատու

Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	ՀՏՀՀ ՎԽ
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարության ընթացքում	ՀՏՀՀ ՎԽ
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	ՀՏՀՀ ՎԽ
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Գորիսի քաղաքապետարանի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	ՎԽ Գորիսի քաղաքապետարանի վերահսկողություն
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	ՀՏՀՀ ՎԽ
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	ՀՏՀՀ ՎԽ
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարե-	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի զննում	Շինարարության ավարտին	ՀՏՀՀ, Քոլեջի տնօրինություն

կարգում	օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված				
Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Շահագործման փուլ	ՀՏԶՀ, Քոլեջի տնօրինություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.atdf.am
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՐԻՅԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Այս էլ վավերագրումը հաստատվում է «14» Մայիսի 2014 թվականին գրքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատրատում առաջարկյալ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հանուն Ավարյանի

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԱՌԵՅՅԵԿՏ ԱՆՇՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՐԻՅԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՑՈՐ ԵՎ ԱՆԿԱՆՈՐԱՐ

Անթր Այվազյան, Խամբայր Գորիս ք. Առաքելյան փողոց 32 Վարչական շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆՈՒՊԱՑԱԾ ՓԱՏԱԳՐԹԵՐԸ

Մոսկվանոցի պայմանագիր 07/01/2004թ., Այվազյանի Անողի առաջին առյալի դատարանի կողմ 15/12/2004թ., Գորիս Խամբայր դեկալարի 11/05/2005թ. թիվ 53-Ս որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՆԻԹՅԱԳՐԹԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09 003-0220-0052

Սա էլեկտրոնային ծածկագիրը՝ 0.6748

Եզրատակարար նշանակությունը՝ բնակավայրերի

Գրանցման պետական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հաստատված և անողացալի

Գրանցման իրավունքի տեսակը՝ ԱՆՇԱՐԺՑԵ ԳՐԱՆՑՄԱՆ

